ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Р Е Ц Е Н З И И

Վ. Ե. ԽՈՋԱԲԵԿՅԱՆ, Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի պրոբլեմներ, *Երևան, 1976, 345 էջ, գինը 1 ռուբ. 80 կոպ.։*

Գիրքը նվիրված է ՀՍՍՀ բնակչության վերարտադրության և աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հարցերի կոմպլեքսային ուսումնասիրությանը, որ խոշոր նշանակություն ունի հանրապետության էկոնոմիկայի վերընթաց զարգացման ուղիների բացահայտման և հիմնավորման տեսակետից։ Այս պրոբլեմներին նվիրված նման ընդհանրացնող աշխատության երևան գալը կարևոր երևույթ պետք է համարել մեր հանրապետության տնտեսագիտական գրականության մեջ։

Մինչև այս աշխատության հրապարակ գալը, տնտեսագիտական հետազոտություններում ուսումնասիրվել են միայն տվյալ թեմային վերաբերող առանձին պրոբլեմներ։ Տնտեսագիտության դոկտոր Վ. Ե. Խոջաբեկյանի աշխատության արժանիքը կայանում է նրանում, որ այն ներկայացնում է մի ամբողջական գործ, որտեղ ուսումնասիրվող թեմայի պրոբլեմների տեսական և գործնական հարցերը մշակվել են հանգամանորեն։ Աշխատությունը երկար տարիների հետազոտության արդյունք է, նրանում համարյա ամբողջությամբ օգտագործվել է տվյալ բնագավառին վերաբերող ռուսերեն և հայերեն գրականությունը։ Աշխատությունը հենվում է հանրապետության և միութենական վիճակագրական օրգանների ու առանձին ձեռնարկությունների տվյալների մշակման և ընդհանրացման վրա, իսկ վիճակագրական նյութերի մշակման և ընդհանրացման համար օգտագործվել է ժամանակակից հաշվային տեխնիկան։

Գիրքը կազմված է երկու բաժիններից, որոնցից առաջինը կոչվում է «Բնակչության ընդլայնված վերարտադրությունը», իսկ երկրորդը՝ «Աշխատանքային ռեսուրսների բաշխումը և օգտագործումը»։

Առաջին բաժինն ընդգրկում է երեք գլուխ, որտեղ մեկնաբանվում և մշակվում են բնակչության վերարտադրության պրոբլեմները դեմոգրաֆիական գիտության տեսանկյան տակ։

Երկրորդ բաժնում, որը ընդգրկում է չորս գլուխ, աշխատանքային ռեսուրսների բաշխման և օգտագործման պրոբլեմները դիտվում են մարքս-լենինյան քաղաքատնտեսության և առհասարակ տնտեսագիտության դիրքերից։

Սակայն նման բաժանումից չի հետևում, որ դեմոգրաֆիայի և տնտեսագիտության պրոբլեմներն ուսումնասիրվում են իրարից մեկուսացված։ Ընդհակառակը, երկու բաժիններում էլ պրոբլեմների հետազոտությունը կատարվում է սերտ կերպով շաղկապված։ Այլ կերպ լինել չէր կարող, որովհետև դեմոգրաֆիան և տնտեսագիտությունը, որպես գիտության բնագավառներ, ինտեգրացված են։

Գրքի առաջին գլխում հետազոտվում են դեմոգրաֆիական այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են՝ ծնունդը, մահացությունը և բնակչության մեխանիկական տեղաշարժերը։

Ծննդաբերությունը թեկուզև բնական, ֆիզիոլոգիական պրոցես է, բայց սերտորեն կապված է արտադրողական ուժերի զարգացման մակարդակի և հասարակական հարաբերությունների բնույթի հետ։ Այսպես, բնակչության աճը զարգացած երկրներում տեղի է ունենում այլ օրինաչափություններով, քան չզարգացած երկրներում։ Զարգացած երկրներում ծննդաբերությունը դանդաղում է, բայց դրա հետևանքով բնակչության աճը չի դադարում բացարձակապես, որովհետև այդ երկրներում նվազում է նաև մահացությունը, հատկապես երեխաների մահացությունը։ Այսպես, օրինակ, ՍՍՀՄ հետպատերազմյան շրջանում ծննդաբերության տեմպերը նվազել են՝ համեմատած նախապատերազմյան շրջանի հետ։ Մինչև 1961 թ. ՍՍՀՄ բնակչության աճման գործակիցը հավասար էր 17,8 (բնակչության 1000 հոգու հաշվով), իսկ 1974 թ. այն իջավ 9,3-ի. ՀՍՍՀ համապատասխան թվերն են՝ 33 և 16,7 (էջ 17, աղ. 1)։ Այդպիսի փոփոխության պատճառը բացատրվում է ոչ միայն պատերազմի ազդեցությամբ, այլև

այն կարևոր սոցիալ-տնտեսական երևույթներով, որոնք առաջացան զարգացած սոցիալիզմի փուլում (էջ 25, 28, 30, 32 և հտ.)։

Սակայն ծննդաբերության դանդաղեցման վրա ազդում են նաև զուտ դեմոգրաֆիական գործոններ՝ վաղ ամուսնությունը, բազմազավակ մայրերի տեսակարար կշիռը բնակչության կառուցվածքում և այլն։ Ակնհայտ է, որ զարգացած սոցիալիզմի փուլում վաղ ամուսնությունը համարյա վերացած է, իսկ երիտասարդ կանայք երիտասարդ տարիքում գերադասում են սովորելը և աշխատելը։

Գրքում բացահայտվում են ծննդաբերության և բնակչության աճի առանձնահատկությունները քաղաքներում և գյուղերում։

Չնայած այն հանգամանքին, որ ՀՍՍՀ բնակչության աճի գործակիցը բարձր է համեմատած Միության միջին ցուցանիշի հետ, բայց հեղինակն ապացուցում է, որ Հայաստանում ևս բնակչության աճը կատարվում է նույնպիսի օրինաչափություններով, ինչպիսիք գոյություն ունեն զարգացած երկրներում։

Բնակչության վերարտադրության պրոցեսի էության բացահայտման տեսակետից կարևոր նշանակություն ունի նրա կառուցվածքի սեռատարիքային տարրերի քանակական հարաբերությունների վերլուծությունը, որովհետև միայն այդ կերպ կարելի է ստույգ տվյալներ ստանալ երեխաների, անչափահասների, աշխատունակների և ծերերի քանակական հարաբերակցությունների մասին, որը շատ անհրաժեշտ է սոցիալ-տնտեսական պրոբլեմների ճիշտ պլանավորման համար։

Աշխատության մեջ ուսումնասիրվում են բնակչության կառուցվածքի քանակական հարաբերակցությունները, դրանց փոփոխությունները։ Հեղինակը մի շարք գործնական հետևություններ և առաջարկներ է կատարում վերարտադրության պրոցեսի օպտիմալության կապակցությամբ։ Նա ցույց է տալիս, որ ծննդաբերության նվազումը և մահացության կրճատումը փոխում է բնակչության կառուցվածքում սեռատարիքային տարրերի քանակական հարաբերակցությունները։ Նշվում է նաև այն, որ Սովետական Հայաստանում մահացությունը աշխարհում ամենացածրն է (էջ 42)։ Այդպիսի հետևություն հեղինակն անում է հատկապես այն պատճառով, որ երեխաների մահացությունն ինչպես ամբողջ ՍՍՀՄ-ում, այնպես էլ ՀՍՍՀ-ում կրճատվել է մեծ չափերով ոչ միայն նախահեղափոխական շրջանի համեմատությամբ, այլև 1940 թ.։ Դրա հետևանքով բնակչության կառուցվածքում խոշոր տեղաշարժեր են առաջացել. բարձրացել է երեխաների տեսակարար կշիռը, աշխատունակների աշխատանքի պայմանների բարելավմամբ աճել է երկարակեցությունը, բարձրացել է ծերերի տեսակարար կշիռը, որոնք ապահովված են կենսաթոշակներով, բնակարաններով և այլ կարգի ապրուստի պայմաններով։ Ակնհայտ է, որ պլանավորող օրգանները պետք է հաշվի առնեն բնակչության կազմում տեղի ունեցող այս փոփոխությունները։

Գրքում հետազոտվում են նաև ՀՍՍՀ բնակչության մեխանիկական տեղաշարժերը, ինչպես ՍՍՀՄ տնտեսական շրջանների միջև, նույնպես և հանրապետության ներսում, բնութագրվում են դրանց առաջացումը պայմանավորող պատճառները և աղբյուրները։ Հեղինակն իրավացիորեն ընդգծում է, որ ՀՍՍՀ միգրացիան միշտ դրական մնացորդ է տվել, բացառությամբ 1948—1952 թթ.։ ՀՍՍՀ միգրացիոն պրոցեսում կարևոր դեր է խաղացել հայրենադարձությունը և անդրկովկասյան հարևան հանրապետություններից հայ բնակչության հոսքի ուժեղացումը դեպի Հայաստան։

Անդրադառնալով բնակչության ներհանրապետական մեխանիկական տեղաշարժերի պրոբլեմին, հեղինակը առաջարկում է գյուղից քաղաք կատարվող հոսքը կարգավորել և պլանավորել այնպես, որ գյուղատնտեսությունը ևս ապահովվի երիտասարդ որակյալ կադրերով (էջ 57—60)։

Առաջին բաժնի երկրորդ գլխում ուսումնասիրվող պրոբլեմներից կարևորագույնը պետք է համարել պետության դեմոգրաֆիական քաղաքականության էության բացահայտումը։ Այստեղ հեղինակն իրավացիորեն նշում է, որ սոցիալիստական պետության դեմոգրաֆիական քաղաքականությունը նպաստել է բնակչության աճին, մահացության կրճատմանը և մարդկանց երկարակեցությանը (էջ 69)։

Պետության դեմոգրաֆիական քաղաքականության կապակցությամբ, ինչպես հայտնի է, տնտեսագիտական գրականության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել։ Հեղինակը քննադատաբար մեկնաբանում է այդ տեսակետները։ Օրինակ, նա չի համաձայնվում այն կարծիքին, թե երեխամորը պետք է երեք տարի վճարովի արձակուրդ տալ (էջ 66), կամ երեխաներին ծննդյան առաջին իսկ տարուց հանձնել մանկամսուր և այլն։ Մեր կարծիքով, Վ. Խոջաբեկյանն իրավացի է, որովհետև այդպիսի առաջարկները ո՛չ կնոջ շահերից են բխում և ո՛չ էլ երեխայի (էջ 69—70)։

Սակայն թվում է, թե հեղինակի հետևյալ առաջարկության հետ չպետք է համաձայնվել. «Տեղին կլիներ, եթե յուրաքանչյուր մոր աշ-

խատանքային արձակուրդն ավելացվեր՝ նրա մեծացրած երեխաների թվին համապատասխան» (էջ 76)։ Պետք է հաշվի առնել, որ արձակուրդները ևս տրվում են ըստ աշխատանքի բաշխման օրենքի պահանջներին համապատասխան, չնայած որ այդ նպատակով կատարվող հատկացումները մտնում են սպառման հանրային ֆոնդերի մեջ։

Կենսաթոշակների բաշխումը ևս հեղինակը փորձում է կապել երեխաների քանակի հետ (էջ 75—76)։ Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել, որ կենսաթոշակները որոշ առումով բաշխվում են՝ ելնելով ըստ աշխատանքի բաշխման տնտեսական օրենքի պահանջներից, երկրորդ բազմազավակ ընտանիքները երեխաների համար պետությունից նպաստ են ստանում, երրորդ բազմազավակ ընտանիքի երեխաները, աշխատունակ դառնալով, որպես կանոն, օգնում են ծնողներին։ Մեր կարծիքով, ճիշտ է հեղինակի այն դրույթը, որ երեխաներ դաստիարակող, բայց չաշխատող մայրը պետք է որոշ չափի կենսաթոշակ ստանա, որովհետև երեխաներին պահելն ու դաստիարակելը նույնպես կարևոր նշանակություն ունեցող հանրօգուտ աշխատանք է։ Բայց թոշակների չափը երեխաների հետ կապելը կնշանակեր, որ այստեղ բաշխումն ամբողջությամբ կատարվում է ըստ պահանջմունքի, որը դեռ վաղաժամ է։

Աշխատության երկրորդ գլխում հեղինակը մի շարք աղյուսակներով կանխատեսում է բնակչության վերարտադրության պրոցեսների ուղղությունները հեռանկարում, ներառյալ 2000 թ., համեմատած 1970 թ. հետ (էջ 94, 96, 99, 106 և 108)։

Ինչպես հայտնի է, իրական պրոցեսները բնության մեջ և հասարակական կյանքում միշտ գտնվում են շարժման մեջ, դրանք դինամիկ պրոցեսներ են։ Այդ վերաբերում է նաև բնակչության վերարտադրությանը։ Այստեղ ևս մշտական փոփոխություններ են տեղի ունենում բնակչության կառուցվածքում, նրա բաղկացուցիչ տարրերի քանակական և որակական հարաբերություններում, հետևաբար դրանց ուսումնասիրությունը պետք է կատարվի շարժման մեջ, որով միայն ճիշտ կբացահայտվեն բնակչության կառուցվածքի մեջ մտնող տարբեր տարրերի փոխադարձ կապակցությունները և ազդեցությունները։

Ժողովրդական տնտեսության զարգացման, դրա պլանավորման համար առաջնակարգ նշանակություն ունի աշխատունակ բնակչության բացարձակ և հարաբերական մեծությունների որոշումը։ Այս պրոբլեմին է նվիրված գրքի երկրորդ գլուխը։

Այստեղ հեղինակը մի շարք վերլուծական աղյուսակներով բացահայտում է այն պրոցեսները, որոնք պայմանավորում են աշխատունակ բնակչության աճի տեմպերը, նրա տեսակարար կշիռը, բացարձակ մեծությունը բնակչության կառուցվածքում՝ անցած էտապում և հեռանկարում (էջ 112, 118, 120, 123; 125, 129, 130)։ Հեղինակը բնակչության աշխատունակ տարրերի քանակական հարաբերությունները որոշելով հանդերձ, միաժամանակ ցույց է տալիս նյութական արտադրության աշխատողների համեմատությամբ բնակչության սպառող մասի հարաբերակցությունը։ Այս պրոբլեմի էությունը մեկնաբանվում է աշխատանքի արտադրողականության աճի և դինամիկայի հետ կապված. անընդհատ աճի պայմաններում կփոխվի արտադրության նաև ոչ նյութական ոլորտներում աշխատողների հարաբերակցությունը, այնպես որ սպառողների հարաբերական և բացարձակ մեծությունները կաճեն։ Այդ պրոցեսը գիտատեխնիկական առաջադիմության արդյունք է, որն իր հերթին բխում է սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի պահանջից։

Գրքի առավել հետաքրքիր մասը, մեր կարծիքով, երկրորդ բաժինն է։ Այստեղ հանգամանորեն հետազոտվում են մի շարք տնտեսագիտական պրոբլեմներ, որոնք տեսական առումով դեռ հարկ եղած չափով մշակված չեն և տնտեսագետների մոտ առաջացնում են սուր բանավեճեր։ Մեկնաբանելով այդ վեճերի էությունը, հեղինակը շարադրում է իր տեսակետները։

Տնտեսագետների մոտ վիճաբանության առարկա է հանդիսանում աշխատանքային ռեսուրսների սոցիալ-տնտեսական բովանդակությունը, դրանց էության բացահայտումը։ Բանավեճի առանցքն է աշխատանքային ռեսուրսների և աշխատուժի կատեգորիաների էության գիտական սահմանազատումը։ Քննադատաբար վերլուծության ենթարկելով այդ կապակցությամբ գոյություն ունեցող տեսակետները (էջ 134—145), հեղինակը տալիս է իր սեփական ձևակերպումները և սահմանումները, մեկնաբանում է և հիմնավորում իր առաջ քաշած դրույթները։

Տնտեսագետներից ոմանք գտնում են, որ աշխատանքային ռեսուրսները ավելի լայն հասկացողություն է, քան աշխատուժը։ Հեղինակն այդ տեսակետը չի ընդունում (էջ 137, 138, 139)։ Մեր կարծիքով, Վ. Խոջաբեկյանն իրավացի է, որովհետև աշխատուժն է այն ընդհանուրը, վերացականը, որի մեջ ընդգրկվում է նաև կոնկրետը։

Տալով աշխատուժի և աշխատանքային ռեսուրսների էության ընդհանուր բնութագրու-

թյունը, գրքում միաժամանակ բացահայտվում են դրանց տարբերությունները։ Նշվում է, որ աշխատանքային ռեսուրսները, որպես կատեգորիա, աշխատուժից որակապես չեն տարբերվում, դրանց տարբերությունը քանակական որոշվածության մեջ է (էջ 141—142)։

Աշխատուժի և աշխատանքային ռեսուրսների ճիշտ սահմանազատումը հնարավորություն է ստեղծում նաև ճիշտ ընութագրելու աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը, դրանց մեջ ընդգրկվող տարրերը։ Այսպես, Վ. Խոջաբեկյանը իրավացիորեն գտնում է, որ չի կարելի աշխատանքային ռեսուրսների կառուցվածքից հանել այն աշխատունակներին, որոնք ժամանակավորապես չեն աշխատում արտադրության մեջ (էջ 140—141)։

Տնտեսագետների մոտ վիճաբանություն են առաջացնում նաև լրիվ զբաղվածության, աշխատուժի ռացիոնալ օգտագործման հարցերը, դրանց հետ կապված՝ բնակչության սոցիալ-տնտեսական օրենքը և բնակչության վերարտադրության դեմոգրաֆիական օրենքը։ Որոշ տնտեսագետներ դրանք նույնացնում են։ Ընդունելով այդ տեսակետը, հեղինակը գտնում է, որ այդ օրենքները վերարտադրության պրոցեսի տարբեր կողմերն են արտահայտում, որ դրանք չի կարելի նույնացնել։ Առաջին օրենքը «...արտահայտում է բնակչության զբաղվածության էությունը», իսկ երկրորդը «...կապ ունի բնակչության վերարտադրության պրոբլեմի հետ» (էջ 148)։ Ակնհայտ է, որ նման մեկնաբանությունը ճիշտ է, որովհետև այդ օրենքներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, որոնք արտահայտում են որակապես տարբեր պրոցեսներ։ Այս պրոբլեմների քննարկմանը ևս հեղինակը հարկ եղած ուշադրություն է դարձնում, որովհետև դրանք ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն ունեցող ակտուալ պրոբլեմներ են։

Գրքի երկրորդ բաժնում առավել բովանդակալից է «Աշխատանքային ռեսուրսները հանրային տնտեսության մեջ» գլուխը։ Այստեղ տեսական ընդհանրացումները սերտորեն շաղկապվում են գործնական առաջարկների ու հանձնարարականների հետ։

Գրքում նշվում է, որ աշխատանքային ռեսուրսների պահանջարկը պայմանավորվում է հասարակական արտադրության կառուցվածքով, նրա առանձին ճյուղերի արտադրանքի չափերով և դրանց աճման տեմպերով։ Այսպիսի ընդհանրացումն, ինչ խոսք, ճիշտ է, որովհետև իրոք վճռական նշանակություն ունեն արտադրության բնույթը և նրա ճյուղային կառուցվածքը։ Այս գլխում վերլուծվում է աշխատանքային ռեսուրսների օգտագործման գոյություն ունեցող վիճակը։ Բացահայտվում են այդ բնագավառի թերությունները, ցույց է տրվում, թե ինչպիսի ուղիներով պետք է կատարելագործվի հասարակական արտադրության կառուցվածքը, որով կբարձրանա աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը։ Հասարակական արտադրության ճյուղային կառուցվածքի վերլուծությանը նախորդում է երկու ոլորտներում զբաղվածության հարաբերակցության բացահայտումը։ Հեղինակն ընդգծում է, որ գիտատեխնիկական առաջընթացը պայմանավորում է ոչ արտադրական ոլորտներում աշխատողների թվաքանակի բացարձակ և հարաբերական աճ, բայց դա բնավ չի բացառում այն հանգամանքը, որ «...միշտ հասարակական կարևոր խնդիր կլինի աշխատանքի բաշխումը նյութական արտադրության առանձին ճյուղերի միջև, քանի որ նյութական արտադրությունը մարդկային գործունեության հիմքն է» (էջ 160—161)։

Աշխատության այս գլխում բազմակողմանիորեն վերլուծության է ենթարկվում հանրապետության արդյունաբերության կառուցվածքը, որը հանդիսանում է ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղը և արտադրության բոլոր ճյուղերի ինդուստրիալ վերակառուցման հիմքը։ Արդյունաբերության ճյուղային կառուցվածքի կատարելագործումն ինքնին հանդիսանում է աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման կարևորագույն պայմանը։ Կոոպերացումը, ինտեգրացումը և նոր պրոգրեսիվ ճյուղերի առաջացումը, որոնք մարմնավորում են գիտատեխնիկական առաջընթացը, պայմանավորում են աշխատուժի արտադրողականության աճը, նրա արդյունավետության բարձրացումը և արտադրության տեմպերի արագացումը։

Աշխատանքային ռեսուրսների օգտագործման պրոբլեմը գրքում հետազոտվում է նաև ժողովրդական տնտեսության մյուս խոշոր ճյուղերի՝ գյուղատնտեսության, շինարարության և տրանսպորտի օրինակներով։

Գոյություն ունեցող իրավիճակի վերլուծությունը ուղեկցվում է հետևություններով և ընդհանրացումներով։ Հեղինակը հանգում է այն հետևությանը, որ զբաղվածության չափերը և տեմպերն աճում են ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ գյուղատնտեսության, ըստ որում նա բացահայտում է այն պատճառները, թե ինչու է գյուղատնտեսությունն այդ տեսակետից բացառություն կազմում և անում է համապատասխան առաջարկներ։

Հասարակական արտադրության մեջ զբաղվածների արդյունավետությունը բացահայտելու նպատակով Վ. Խոջաբեկյանը զբաղվածների աճի ցուցանիշները համեմատում է էկոնոմիկայի աճման ցուցանիշների հետ։ Այդպիսի համեմատությունը ցույց է տալիս, որ արտադրության ճյուղերից միայն գյուղատնտեսությունն է արտադրանքի աճի տեմպերով հետ մնում աշխատանքային ռեսուրսների աճի տեմպերից (էջ 164)։ Հեղինակը ճիշտ է նշում, որ ազգային եկամուտը ՀՍՍՀ մեկ շնչի հաշվով 1972 թ., համեմատած 1960 թ. հետ, աճել է ինչպես ամբողջությամբ վերցրած, այնպես էլ մեկ շնչի հաշվով։ Մեր կողմից նշենք, որ ազգային եկամտի աճի տեմպերը ՀՍՍՀ-ում ավելի արագ են եղել, քան ՍՍՀՄ-ում, բայց չնայած դրան ՀՍՍՀ-ում մեկ շնչի հաշվով բացարձակ չափերով քիչ ազգային եկամուտ է արտադրվում, քան ՍՍՀՄ-ում։ Թե ինչո՞ւ է այդպես՝ հեղինակի ուշադրությունից այս հարցը վրիպել է։

Աշխատության հաջորդ գլխում հետազոտության կարևոր պրոբլեմներից է ներարտադրության ռեզերվների օգտագործումը արտադրության մեջ, որը դիտվում է որպես կարևորագույն գործոն աշխատանքի արտադրողականության բարձրացման բնագավառում։ Նշվում է, որ զարգացած սոցիալիզմի փուլում Սովետական Հայաստանի արդյունաբերության ճյուղերում աշխատանքի արտադրողականության բարձրացմանը նպաստող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները կատարելագործվել են, որոշ չափով աճել է աշխատանքի արտադրողականությունը։ Սակայն միաժամանակ հեղինակը գտնում է, որ վերջին տասնամյակներում աշխատանքի արտադրողականության աճը ՀՍՍՀ-ում չի համապատասխանում պլանային առաջադրանքների տեմպերին «...և զգալիորեն զիջում է ՍՍՀՄ արդյունաբերության միջին աճին» (էջ 186)։ Հեղինակը վերլուծում է այն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, որոնց թերօգտագործման, արտադրության և աշխատանքի կազմակերպման դանդաղ կատարելագործման հետևանքով պայմաններ չեն ստեղծվում աշխատուժի արտադրողականության աճի անհրաժեշտ վերելքը ապահովելու համար։

Նույն գլխում հետազոտվում է նաև աշխատանքային ռեսուրսների վիճակը չհանրայնացված ոլորտներում՝ անձնական և տնային տնտեսության ոլորտներում։ Այստեղ հեղինակի կռահումները հանգում են այն բանին, որ այդ ոլորտներում որոշակի աշխատանքային ռեսուրսներ կպահպանվեն նաև հեռանկարում, բայց դրանց կիրառման շրջանակները աստիճանաբար կսահմանափակվեն։

Աշխատության վերջին գլխում շարադրվում է այն գործոնների էությունը, որոնք պայմանավորում են գիտատեխնիկական առաջընթացին զուգահեռ որակյալ աշխատուժի վերարտադրումը։ Ընդգծվում է, որ գիտատեխնիկական առաջընթացը փոխում է աշխատանքի բնույթը, որ աստիճանաբար հաղթահարվում են մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած տարբերությունները, փոխվում են նաև պրոֆեսիաների բովանդակությունն ու ձևերը, համակերպվում են գիտատեխնիկական առաջընթացի պայմաններին։ Հանգամանորեն քննարկվում են աշխատուժի վերարտադրության և վերաորակավորման գոյություն ունեցող մեթոդներն ու սիստեմները։ Հեղինակն անում է մի շարք ուշադրության արժանի առաջարկներ որակյալ աշխատուժի վերարտադրության պրոցեսը կատարելագործելու նպատակով։

Վերը շարադրվածից հետևում է, որ Վ. Խոջաբեկյանը հրապարակի վրա է դրել մի աշխատություն, որը գրված է բարձր տեսական մակարդակով, պարունակում է բազմաթիվ գործնական առաջարկներ ու հանձնարարականներ։ Գրքի հարուստ լեզուն օգնում է նյութի ընկալմանը։

Քննարկվող աշխատության մեջ տեղ են գտել մի քանի անհաջող արտահայտություններ և մասնակի թերություններ. օրինակ, առանձին քաղաքների նկատմամբ չի կարելի գործածել «ժողովրդական տնտեսություն» արտահայտությունը (էջ 273), «աշխատանքային տարիքի բնակչության» փոխարեն կարելի էր պարզապես ամենուրեք գործածել «աշխատունակներ» և այլն։ Գիրքը շահած կլիներ նաև, եթե անցումները կատարվեին հնգամյակների կապակցությամբ։

Սակայն նշված թերությունները չեն կարող նսեմացնել այս աշխատության հիմնական արժանիքները։

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ